ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

«18» օգոստոսի 2023 թ. կնքված N «ՀՀ ԱՄՎՀ ԲՄԱԾՁԲ 23/1» ծածկագրով պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին

ք. Էջմիածին «18» հունվարի 2024 թ.

Վաղարշապատի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավարին փոխարինող, առաջին տեղակալ Ա. Պետրոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Բիդեք» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Գ. Ավետիսյանի, որը գործում է ՍՊԸ-ի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, հիմք ընդունելով «18» օգոստոսի 2023 թ. կնքված № «ՀՀ ԱՄՎՀ ԲՄԱԾՁԲ 23/1» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 5.1 և 8.5 կետերը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 «18» օգոստոսի 2023 թ. կնքված № «ՀՀ ԱՄՎՀ ԲՄԱԾՁԲ 23/1» ծածկագրով պայմանագրի Հավելված N 3-ով սահմանված **Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 6 «Արևիկ» մանկապարտեզի հիմնանորոգման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքների** (այսուհետ՝ Աշխատանքներ) վճարման ժամանակացույցում կատարվում են փոփոխություններ՝ սույն Համաձայնագրի N 1 Հավելվածին՝ վճարման ժամանակացույցին համապատասխան:

1.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

1.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 1) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1 Սույն Համաձայնագրում չնշված՝ կողմերի Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները, այդ թվում Աշխատանքների հանձման-ընդունման հետ կապված և այլ հարաբերությունները թողնվում են անփոփոխ:

2.2 Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն Համաձայնագիրը կնքվում է 2 էջից, 3 օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, Պատվիրատուին տրվում է երկու օրինակ, Կապալառուին՝ մեկ: Սույն Համաձայնագրի N 1 հավելվածը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի մասը:

2.4 Սույն համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՊԱԼԱՌՈՒ
Վաղարշապատի համայնքապետարան	«Բիդեք» ՍՊԸ
Արմավիր, ք. Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոց 0	ք. Երևան, Սասունցի Դավիթ 87 ա
ՀՀ ՖՆ Գործառնական կառուցվածքի	«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 900322201030	Հ/Հ՝ 1570015559920100
ՀՎՀՀ՝ 04440307	ՀՎՀՀ՝ 00450801
Համայնքի ղեկավարի փոխարինող՝	
առաջին տեղակալ՝ _____ Ա. Պետրոսյան	Տնօրեն՝ _____ Գ. Ավետիսյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 1
«18» օգոստոսի 2023 թ. կնքված
«ՀՀ ԱՄՎՀ ԲՄԱՇՁԲ 23/1» ծածկագրով պայմանագրում
փոփոխություններ կատարելու նպատակով
«18» հունվարի 2024 թ. կնքված համաձայնագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

...րավերով ...ատեսված ...փաբաժնի ...ամարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը` ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	Աշխատանքի												
			դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2024 թ-ին` ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	45211228	Վաղարշապատ համայնքի Էջմիածին քաղաքի թիվ 6 «Արևիկ» մանկապարտեզի հիմնանորոգման և նոր մասնաշենքի կառուցման աշխատանքներ	0	21675863	21675863	21675863	21675863	217516613	507538764	725055377	725055377	725055377	725055377	725055377	725055377

...ճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:
...խատանքի դիմաց վճարումներն իրականացվում են համապատասխան կառարողական ակտերի, հանձնման – ընդունման արձանագրությունների հիման վրա:
...արման ժամանակացույցում հնարավոր են փոփոխություններ՝ կողմերի միջև կնքվող համաձայնագրերի հիման վրա:
...խատանքի կատարման դիմաց վճարումներն իրականացվելու են համայնքի բյուջեից 217516613 ՀՀ դրամ և պետական բյուջեից 507538764 ՀՀ դրամ:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Վաղարշապատի համայնքապետարան
Արմավիր, ք. Էջմիածին, Սբ. Մ. Մաշտոց 0
ՀՀ ՖՆ Գործառնական վարչ-ն
Հ/Հ` 900322201030
ՀՎՀՀ` 04440307

Համայնքի ղեկավարի փոխարինող
առաջին տեղակալ` ________ Ա. Պետրոսյան
/ստորագրություն/
Կ.Տ.

ԿԱՊԱԼԱՌՈՒ
«Բիդեք» ՍՊԸ
ք. Երևան, Սասունցի Դավիթ 87 ա
«Ամերիաբանկ» ՓԲԸ
Հ/Հ` 1570015559920100
ՀՎՀՀ` 00450801

Տնօրեն` ________ Գ. Ավետիսյան
/ստորագրություն/
Կ.Տ.